600.0046.14.02.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2018 թվականի №46Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի №196Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «Է Ա Գ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի փետրվարի 2-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 24-ի «Է Ա Գ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գրին Էներջի» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №196Ա՝
   1) որոշման մեջ «մինչև 2018 թվականի մայիսի 24-ը» բառերը փոխարինել «մինչև 2018 թվականի փետրվարի 14-ը» բառերով.
   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ «Է Ա Գ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Գրին Էներջի» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0604 լիցենզիայի պայմանների՝

      ա. 5-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

      «5. ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ».

բ. 6-րդ կետում «999,68» թիվը փոխարինել «999,0» թվով.

գ. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. «Գրին Էներջի» արևային էլեկտրակայանի տեղակայված հզորությունը 999,0 կՎտ է:».

դ. 8-րդ կետում «տեխնիկատնտեսական ցուցանիշների» բառերը փոխարինել «տեղակայված հզորության» բառերով:

2. «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2017 թվականի ապրիլի 28-ի №2457-02 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
14 փետրվարի 2018թ.
ժամը 16[00]